Հաստատված է
ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի
2014թ. հուլիսի 11-ի նիստում
Ռեկտոր Ս.Ա. Սեդրակյան

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. «Ուրարտու» համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոների տեղակալումն իրականացվում է համաձայն կրթության մասին ՀՀ օրենքի մրցույթի անցկացման եւ նրա արդյունքների հիման վրա պայմանագրի ձևակերպման միջոցով:
2. Դասախոսական կազմի տարակարգերն են՝
ԴԱՍԱԽՈՍ, ԱՍԻՍՏԵՆՏ, ԴՈՑԵՆՏ, ՊՐՈՖԵՍՈՐ:
3. Դասախոսական կազմի տարակարգերի աշխատանքների տարակարգերը.

ԴԱՍԱԽՈՍ

- գործնական եւ լաբորատոր պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում,
- հանրակրթական առարկաների դասավանդում,
- մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների եւ նախագծերի ղեկավարում:

ԱՍԻՍՏԵՆՏ

- դասախոսությունների, գործնական եւ լաբորատոր պարապմունքների անցկացում /հիմնականում բակալավրիատում/,
- ուսանողների հետ խորհրդատվությունների կանոնավոր անցկացում,
- բակալավրիատի շրջանավարտների ավարտական աշխատանքների ղեկավարում,
- մասնակցություն ուսումնամեթոդական եւ գիտահետազոտական աշխատանքներին:

ԴՈՑԵՆՏ

- դասախոսությունների անցկացում /հիմնականում բակալավրիատում/, ինչպես նաեւ մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում,
- գիտամեթոդական սեմինարների անցկացում,
- մագիստրոսական թեզերի եւ ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- հետազոտական աշխատանքների կազմակերպում եւ իրականացում,

ՊՐՈՖԵՍՈՐ

- դասախոսությունների անցկացում /հիմնականում մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում/,
- գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրոսական թեզերի եւ ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- մագիստրոսական եւ ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների, դասընթացների պատրաստում եւ իրականացում,
- գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես, մենագրությունների եւ ուսումնական ձեռնարկների պատրաստում,
- զեկուցումներ հանրապետական եւ միջազգային գիտաժողովներում,

Գլուխ 2. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ռեկտորը հաստատում է ընթացիկ տարում պայմանագրերն ավարտելու կապակցությամբ առաջացող թափուր մրցութային տեղերի ցուցակը:

Կադրերի բաժինը պայմանագրային ժամկետը լրանալուց 1 ամիս առաջ տեղյակ է պահում համապատասխան աշխատակիցներին:

5. Թափուր տեղերի տեղակալման համար մրցույթները հայտարարվում են ուստարվա ընթացքում:

6. Մրցույթի մասնակիցները ներկայացնում են դիմում ռեկտորին եւ հետեւյալ փաստաթղթերը.

- կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
-բարձրագույն կրթության վկայականի /դիպլոմի/, գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները, վավերացված սահմանված կարգով,

-տեղեկանք վերջին աշխատավայրից,

- հրատարակված գիտական աշխատությունների եւ գյուտերի ցանկը:

7. Ռեկտորը, դեկանը, ամբիոնի վարիչն իրավունք ունի մրցույթի մասնակցին հանձնարարել սեմինար եւ գործնական պարապմունքներ: Դասախոսության թեման հանձնարարվում է ամբիոնի կողմից, ուսումնական պլանի եւ ծրագրի շրջանակներում:

8. Մրցույթով անցած դասխոսը համալսարանի հետ պայմանագիր կնքելուց հետո աշխատանքի է անցնում «Ուրարտու» համալսարանում: